# ANNOUNCEMENT

## On Price Setting Inquiry

The text of this announcement is approved by the Decision N 1 of Price Setting Inquiry Committee dated 11 August 2017 and is being published according to Article 27 of the Law of the Republic of Armenia "On Procurements".

The code of the Price Setting Inquiry: ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/004-Բ

The Client, ,,Hrazdan Bjshkakan Kentron,, Closed Joint Stock Company, Hrazdan city, M. Baghramyan district, Purakayin 32. is announcing price setting inquiry, which is implemented by one stage through electronic procurements Armeps system (www.armeps.am).

Selected participant in quoting request will be offered to sign **Fuel** network maintenance services contract (hereinafter contract).

According to the terms of Article 7 of the RA Law “On Procurements”, all persons or entities, inspetive of being a foreigner, a foreign entity or a stateless person, may participate in price setting inquiry.

The qualification and evaluation criteria for the persons not eligible for participation in price setting inquiry, as well as for the participants are specified in the invitation for this procedure.

The selected participant is determined from the participant’s submitted responsive evaluated inquiries. The preference will be given to a participant who submitted a proposal with minimal price.

To receive the hard copy of invitation of price setting procedure it is required to apply to the Client within 7 day from the day of publication of the announcement 11:00 am. To receive an invitation in a hard copy it is necessary to send a written request to the Client. The Client is obliged to provide the hard copy free of charge the following day after receiving the request. The soft copy of the invitation is provided by the Client free of charge the following day after receiving the request.

Absence of an invitation shall not restrict the right of the participant to participate in this procedure.

The inquiries for price setting procedure should be submitted electronically through Armeps (www.armeps.am) website within 7 days from the day of publication of the announcement, 11:00 am. The inquiries may be submitted in Armenian, or Russian or English.

The opening of inquiries will be done electronically via www.armeps.am website after 7 days from the day of publication of the announcement on 11:00 am.

The complaints regarding the procedure are to be submitted to Procurement Appeals Board (address: 1 Melik-Adamyan, Yerevan, RA). The appeal is conducted according by the order defined by the price setting invitation. For submission of the appeal 30 000 (thirty thousand) AMD fee is required, which should be transferred to 900008000482 account of Ministry of Finance of RA.

For further information regarding this announcement, apply to the secretary of the evaluation commission Larisa Navasardyan, 077-44-81-41, e-mail;larisanavasardyan5@gmail.com

**Client**

Hrazdan Bjshkakan Kentron,, Closed Joint Stock Company

ОБЪЯВЛЕНИЕ
О ЗАПРОСЕ ЦЕНЫ
Текст данного объявления
утвержден решением N 1 оценивающей комиссии запроса цены от 11-ого августа 2017г. и публикуется согласно статьи 27 Закона РА <<О закупках>>

*Код запроса цены* ՅԲԿ-ԳՅԱՊԲ-17/004-Բ

Заказчик – << Раздани Бжшкакан Кентрон>> ЗАО объявляет запрос цены, которое осуществляется одним этапом, посредством систем электронных закупок Armeps (www.armeps.am ).

Выбранному участнику запроса цены в установленном порядке будет предложено подписать контракт о поставке Топливо/ бензин и солярка/.

Согласно статье 7 Закона РА <<О закупках>> заявки запроса цены могут представлять все лица, вне зависимости от того, являются ли они иностранными физическими лицами, организацией или лицом, не имеющим гражданства, при этом они имеют равные права для запроса цены.

Лицам, не имеющих права участвовать в запросе цены, а также критерии оценки квалификации участников и документы, представленные для оценки этих критериев, определены приглашением данной процедуры.

Выбранный участник определяется из числа участников, заявки которых были оценены удовлетворительно, давая предпочтение участнику, представившему минимальную цену.

Для получения приглашения запроса цены в документальной форме необходимо обратиться к заказчику, считая со дня публикации до 11:00 7-ого дня. Для получения приглашения запроса цены в документальной форме необходимо Заказчику представить письменное заявление. Заказчик обеспечивает документальную форму бесплатно в первый рабочий день после получения такого запроса.

В случае требования приглашения в электронной форме Заказчик обязуется предоставить приглашение по электронной почте в течение рабочего дня после получения соответствующего заявления.

Неполучение приглашения согласно порядку, установленному этим приглашением, не ограничивает право участника принять участие в процедуре.

Заявки запроса цены необходимо представить в электронной форме на веб странице www.armeps.am до 11:00 ч. 7-ого дня опубликования данного объявления.

Заявки могут быть представлены кроме армянского, также на английском или русском языках.

Открытие предложения (заявок) участников будет осуществляться в электронной форме через веб-страницу www.armeps.am , в 11:00 7-ого дня после публикации данного объявления.

Жалобы относительно открытой процедуры представляются в Апелляционный совет по закупкам по адресу г. Ереван, Мелик-Адамян 1. Обжалование осуществляется в порядке, установленном этим приглашением. Для подачи жалобы требуется оплатить 30 000 (тридцать тысяч) драмов, на банковский счет <<900008000482>> казначейства, открытый Министерством финансов Армении.

Для получения дополнительной информации относительно данного приглашения можете обратиться к секретарю оценочной комиссии – Ларисе Навасардян ,тел. 077-44-81-41 эл.почта: larisanavasardyan5@gmail.com

Заказчик –<< Раздани Бжшкакан Кентрон>> ЗАО

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնանշման հարցման հանձնաժողովի 2017 թվականի «օգոստոսի» «11» «1» որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Գնանշման հարցման ծածկագիրը` ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ 17 /004-Բ

Պատվիրատուն` ,,Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ որը գտնվում է ք.Հրազդան, մ. Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեում,հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով` էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ,,**Վառել իքի**,, մատակարարման պայմանագիր (այսուհետ` պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն` ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից` նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված` **___7___-րդ օրը ժամը __11:00__-ը:** Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը :

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի` էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի` սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով` էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը ___11:00___-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով` էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված ___7 -րդ օրը ժամը __11:00__-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների բողոքարկման խորհուրդ` ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար` 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար `Լարիսա Նավասարդյանին:

Հեռախոս 077- 44-81-41

Էլ. Փոստ larisanavasardyan5@gmail.com

Պատվիրատու ______<<Հրազդանի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ

Հաստատված է
**ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ–17/004-Բ**_ծածկագրով
գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի
2017 թ. ____11 .օգոստոսի____-ի N ___1___որոշմամբ

# «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ

# Հ Ր Ա Վ Ե Ր

## «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ -Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՎԱՌԵԼ ԻՔԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

Հարցելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Միաժամանակ - հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկով.

- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս անհրաժեշտ է դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ լիազորված մարմին)՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝(+37410) 28-93-20):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

՝՝Հրազդանի Բժշկական Կենտրոն՝՝ ՓԲԸ **ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ „ՎԱՌԵԼԻՔԻ„**

**ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ**

### ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետվերցնելու կարգը
7. Հայտի ապահովումը
8. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

### ՄԱՍ II. ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հավելվածներ 1-12

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն **ՀԲԿ - ԳՀԱՊՁԲ 17 / 004-Բ** ծածկագրով անցկացվող գնանշման հարցման (այսուհետև` ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում` «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ` Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ` Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի **«Հրազդանի Բժշկական Կենտրոն»ՓԲԸ -ի** (այսուհետ` պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ` մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների` գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց` օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am հասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Համակարգում մասնակցի գրանցման գործընթացը նկարագրված է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկում:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է` « larisanavasardyan5@gmail.com»

ՄԱՍ I

# 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում **«Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ** կարիքների համար՝ **«ՎԱՌԵԼԻՔԻ»** ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժիններում՝

| *Չափաբաժիններ ի համարները* | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|
| 1 | ԲԵՆԶԻՆ ՌԵԳՈՒԼՅԱՐ |
| 2 | ԴԻԶՎԱՌԵԼԻՔ |

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածում:

# 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված` ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է`

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե`

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի` ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ` բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում` առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի` ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված` ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող`

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող`

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)` գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում **ՎԱՌԵԼԻՔԻ** մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար` տվյալ պայմանագրի կողմերի հաստատած` պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2) <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

3) <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող`

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

4) <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով`

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

2.6 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.7 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում`

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած` սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում` հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն` մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով` հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ` տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ»

բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար[1]:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ գնանշման հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից **հաջված «-7-»րդ օրվա ժամը «11:00»**-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում որակավորումը հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ,

5) հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի ձևով, ապա հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը.

7) իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

8) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

9) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

10) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի

---

[1] *Եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է Համակարգում «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ: Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

(անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակել ու կամ ազատել ու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

11) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

12) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

## 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

5.1 Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող իրավերով սահմանափակվել:

## 6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

## 7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

7.2 Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ

չափը, ապա ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով.

բ. Մասնակիցը հրաժարվում է որևէ չափաբաժնից կամ պայմանագիր կնքելուց կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման գումարի չափով:[2]

7.3 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

## 8. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված ___7___-րդ օրվա **- 21/08/2017թ**. ժամը ___11:00___-ին:

Հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանա-կարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8.3 Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման նպատակով հանձնաժողովի նախագահն ավտոմատ եղանակով ստեղծում է հայտերի գնահատման մասին արձանագրություն, որը համակարգում հաստատվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ համակարգում նշում կատարելու միջոցով:

8.4 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

8.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված[3] փոխարժեքով:

8.6 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում

---

[2] *Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

[3] *Սահմանվում է պատվիրատուի կողմից:*

իրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված` սույն իրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա` բոլոր մասնակիցների հետ.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

8.7 Հանձնաժողովը իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը`

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի` տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև մասնակցի, այդ թվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում` առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

8.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ` իրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է իրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին` առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

8.10 Եթե սույն իրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

8.11 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ

ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից:

8.12 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

4) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

8.14 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

8.15 Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

8.16 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն հրավերի 8.15-րդ կետով

սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

8.17 Սույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

8.18 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8.19 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

8.20 Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների[4]:

Սույն հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

1) հանձնաժողովը գնահատում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին: Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ մասնակցության իրավունքը, որակավորումը և ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

8.21 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

---

[4] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

8.22 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

8.23 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

8.24 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրամասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.25 Սույն հրավերի 1-ին մասի 8.24 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.26 Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) Համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

8.27 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարության անգործության ժամկետի վերաբերյալ:

8.28 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում <u>___5___</u> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.28 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.28 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա

զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

9.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

9.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.8 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ողջ ծավալով կատարման վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունները ողջ ծավալով կատարվելուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացվելու դեպքում այն ներկայացվում է հավելված N 11-ով սահմանված ձևին համապատասխան:

10.3 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

1) մասնակիցը ընտրված է ճանաչվում մեկից ավել չափաբաժինների մասով, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ: Եթե պայմանագրի ընդհանուր գինը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների գները չեն գերազանցում այդ չափը, ապա պայմանագրի ապահովումը կարող է ներկայացվել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով.

2) կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չաբաժանի մասով լուծվում է, ապա պայմանագրի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:[5]

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

---

[5] *Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում` ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա[6]:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն`

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին` գրավոր դիմում ներկայացնելով` աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է`

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

12.5 Գնումների բողոքարկման խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով`

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում` բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե` այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետփոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.6 Բողոքը բավարարվելու մասին բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքարկման խորհրդի անդամը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին` ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

12.7 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին` նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 12.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված

---

[6] *Սույն կետը խմբագրվում է ըստ համապատասխան պատվիրատուի:*

բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

12.8 Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը խորհուրդ ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն խորհուրդ ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12.9 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.10 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.11 Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

12.12 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.13 Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

12.14 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.15 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

12.16 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.17 Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն հրավերի 12.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

## ՄԱՍ II
## Հ Ր Ա Հ Ա Ն Գ
## ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստել իս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն հրավերի 1-ին մասի 8.19 կետով սահմանված կարգով:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 8-րդ և 9-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

2.3 հայտի ապահովում: Միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, ներկայացվում է հավելված N 10-ով սահմանված ձևին համապատասխան:

Հայտի ապահովումը՝ կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

**2) «Տեխնիկական չափորոշիչ».**

2.4 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի), պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը.

2.5 հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 4-ի.

2.7 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.8 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).[7]

**3) «Ֆինանսական չափորոշիչ».**

2.9 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 5-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

## 3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

---

[7] *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:*

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

3.3 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

**Հավելված N 1**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ԴԻՄՈՒՄ*
## գնանշման հարցմանը մասնակցելու

______________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

______________________________-ի կողմից «--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

գնանշման հարցման ______________________________ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

______________________________ռեզիդենտ:
երկրի անվանումը

______________________________-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ______________________________:
մասնակցի անվանումը — հարկ վճարողի հաշվառման համարը

______________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ______________________________:
մասնակցի անվանումը — էլեկտրոնային փոստի հասցեն

______________________________ Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը)

______________________________ ստորագրությունը)

Կ. Տ.[8]

[8] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 2**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին

Սույնով ______________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է **«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*** ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ ________________________________________________________________ -ն
մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ **«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*** ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ ____________________ -ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) ____________________________________________________________-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ______________________________ -ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)**:

______________________________________________ ____________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.[9]

---

*[9] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:*

**Հավելված 2.1**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ՏՎՅԱԼՆԵՐ**
**մասնակցի իրական շահառուների մասին**

| հ/հ | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

_______________________________________________-ն հավաստում է, որ իրական շահառուների մասին
մասնակցի անվանումը

ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

_______________________________________________ _______________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ.Տ.[10]

[10] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**Հավելված 3**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*  ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին**

Սույնով ______________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է **«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*** ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող` հրավերով պահանջվող փաստաթղթերը:

______________________________________________ ____________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ.[11]

[11] *Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
* *լրացվում է համձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 4**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին**

Սույնով ____________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Սույնով __________________________________________-ն պարտավորվում է առաջին տեղը
մասնակցի անվանումը

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

_______________________________________ ____________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[12]

[12] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 5**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով **«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*** ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ________________________________________ ____________-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| **Չափա-բաժինների համարները** | **Ապրանքի անվանումը** | **Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/** | **ԱԱՀ** /տառերով և թվերով/** | **Ընդհանուր գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

________________________________________ ________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[13]

---

*[13] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
**լրացվում է համաձայնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

**Հավել ված 6**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ԴԻՄՈՒՄ**
**առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման**

________________________________________-ն, որպես **«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »*** 
առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, կից ներկայացնում է նույն հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

________________________________________
առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունն ազգանունը)
ստորագրություն

Կ. Տ.[14]

---

*[14] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 6.1**
**«--ՅԲԿ --ԳՅԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՆԿԱՐԱԳԻՐ
## առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական

______________________________________________-ն, որպես **«--ՅԲԿ --ԳՅԱՊՁԲ-17--/004-Բ »***
առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

| **Չափաբաժնի համար** | **Առաջարկվող ապրանքի** | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **անվանումը** | **ապրանքային նշանը** | **արտադրողի անվանումը** | **ծագման երկիրը** | **տեխնիկական բնութագրերը** |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

______________________________________________
առաջին տեղը զբաղեցրած մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունը ազգանունը)
ստորագրություն

Կ. Տ.[15]

---

*[15] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 7**
**«--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »* ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «--ՀԲԿ --ԳՀԱՊՁԲ-17--/004-Բ »***

ք. Հրազդան «___» ______ 2017 թ.

՝՝ ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-՝՝ ՓԲԸ ի դեմս ՌՈԲԵՐՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ -ի, որը գործում է ________________________-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ___________________-ը, ի դեմս տնօրեն ____________________-ի, որը գործում է -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ___30___ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

**Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __30__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է ________________ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[16]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

---

[16] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրությամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ______ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[17]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[17] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[18]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում

---

[18] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[19]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[20]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը

---

[19] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[21]

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

''ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԲԸ
Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ.
Պուրակային 32
ԱԾԻԲ Հրազդան մ/ճ
h/h 2479204573030010
ՀՎՀՀ 03017721

Տնօրեն՝
Ռ.Սահակյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[21] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | Արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը ** |
| 1 | 09132200 | Բենզին Ռեգուլյար | | Արտաքին տեսքը` մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով` ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով` ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը` 45–ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ$^{3}$-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը 15$^{0}$C ջերմաստիճանում` 720–ից մինչև 775 կգ/մ$^{3}$, ծծմբի պարունակությունը 10մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը` 2.7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի` մեթանոլ 3%, էթանոլ 5%, իզոպրոպիլ սպիրտ 10%, իզոբուտիլ սպիրտ 10%, եռաբութիլ սպիրտ 7 %, եթերներ ($C_5$ և ավելի)-15%, այլ օքսիդիչներ -10%, անվտանգությունը, մականշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ Կառավարության 2004թ. Նոյեմբերի 11–ի N 1592 – Ն որոշմամբ հաստատված ,,Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի՚՚ | լիտր | | | 9400 | Ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թաղ. Պուրակային 32 | | 15.12.2017 |
| 2 | 09134220 | Դիզվառելիք | | Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը 46-ից ոչ պակաս, խտությունը 150C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ$^{3}$, ծծմբի | լիտր | | | 1630 | | | 15.12.2017 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պարունակությունը 350 մգ/կգ –ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը 550C –ից ոչ ցածր, ածխածնի մնացորդը 10%, նստվածքում 0.3%-ից ոչ ավելի, մածուցիկությունը 400 C-ում` 2.0-ից մինչև 4.5 մմ 2 մ/վ, պղտորման ջերմաստիճանը` $0^0$C-ից ոչ բարձր, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. Նոյեմբերի 11-ի N 1592 – Ն որոշմամբ հաստատված ,, Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի ՙ ՙ | | | | | | |

* Ապրանքի մատակարարումը կտրոններով:
** Ապրանքը պետք է լինի չօգտագործված:
*** Տեխնիկական բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ արտադրողին կատարված հղումների հետմիասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:
**** Բենզալցակայանը պետք է գտնվի Հրազդան քաղաքի տարածքում

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«    »    20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 09132200 | Բենզին Ռեգուլյար | | | | | | | 100 | |
| 2 | 09134220 | Դիզվառելիք | | | | | | | **100** | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| --------------------------------- | --------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ ____________________ ____________________
գտնվելու վայրը ____________________
հհ ____________________ ____________________
հվհհ ____________________

Պատվիրատու ____________________ ____________________
գտնվելու վայրը ____________________
հհ ____________________ ____________________
հվհհ ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*§     ¦§               ¦ 20   Ã.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. Դուրս գրված N-- հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

____________________
ստորագրություն

____________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

____________________
ստորագրություն

____________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »          20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը                    Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20   թ. ________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

Հավելված 8
«ՀԲԿ ---ԳՀԱՊՁԲ--17-/004-Բ»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

''Հրազդանի Բժշկական Կենտրոն'' ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված __«ՀԲԿ ---ԳՀԱՊՁԲ--17-/004-Բ»*

ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20___ թվականի ________-ի N _____որոշմամբ 1-ին տեղ է զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցը (մասնակիցները)`

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվել ու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել տեղեկատվություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի` նույն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

______________________ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար __________________________ ______________________________
ընթացակարգի ծածկագիրը — անունը, ազգանունը — ստորագրություն

_____ ___________ 20 թ.

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

Հավելված 9
**«ՀԲԿ---ԳՀԱՊՁԲ--17-/004-Բ»*** ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին

| Ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանումը | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ | հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ | | | | հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը/ՀՀ դրամ | |
| | | | | | | | | | ակտիվներ | պարտավորություն |
| | | | | | 20..թ. | 20..թ. | 20..թ. | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

Տեղեկատվությունը տրվել է _____________________________ վարչության աշխատակից __________________________-ի կողմից ____________________
________

վարչության անվանումը                    անունը, ազգանունը                    ստորագրություն

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

*Հավելված 10*
**«ՀԲԿ ---ԳՀԱՊՁԲ--17-/004-Բ»*** *ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(հայտի ապահովում)**

ք. Երևան «_____»__________________ 20 թ.**

______________________, ի դեմս Ընկերության տնօրեն ______________________________________

Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անունը ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է ՛՛ Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ * (այսուհետ՝ Պատվիրատու)

կողմից կազմակերպված **«ՀԲԿ ---ԳՀԱՊՁԲ--17-/004-Բ»*** * ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է գնման ընթացակարգին մասնակցելու հայտը Ընկերության կողմից ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

______________________________
ընկերության անվանումը

______________________________
ընկերության հասցեն

______________________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

______________________________
ընկերության բանկային հաշվեհամարը

______________________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

______________________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ[22]

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

[22] *Ոչ պարտադիր է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում*

| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[23] **N**<br>*(մասնակցության հայտի ապահովում)* | |
|---|---|
| 2. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ. | |
| 3. Ընկերություն (այսուհետ` վճարող)` | |
| 4. Վճարողի բանկը` | |
| 5. Վճարողի հաշվի համարը` | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ` | |
| 7. Վճարողի ՀԾՀ` | |
| 8. Շահառու` ` ` Հրազդանի Բժշկական Կենտրոն ' ' ՓԲԸ | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ`03017721 | |
| 10. Շահառուի բանկը` ԱՇԻԲ Հրազդան մ/ճ | |
| 11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/2479204573030010 | |
| 12. Գումարը թվերով և բառերով` | |
| 13. Արժույթը (բառերով և կոդով)` | |
| 14. Գործարքի /վճարման/ նպատակը` Հայտի ապահովում | |
| 15.Գնման ընթացակարգի ծածկագիրը` ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/004-Բ | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը<br>17. կից`--- էջ | |
| 19.ա. Շահառուի ստորագրությունները`<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա.<br>Վճարողի ստորագրությունները`<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը**

| Հ/Հ | <<Վճարման | Նշված դաշտի/ | Վավերապայմանի | Վավերապայմա |
|---|---|---|---|---|

[23] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | լրացման պահանջը | նը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | գնման ընթացակարգի ծածկագիրը | պարտադիր | պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համարները, տրամադրման պայմանները | | գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին | լրացվում է շահառուի կողմից |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում: Ոչ պարտադիր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու | կնքվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դեպքում | |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր | |
| 20.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |

*Հավելված 11*
*«ՀԲԿ ---ԳՀԱՊՁԲ-17-/004-Բ»* ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «_____»____________________ 20 թ.**

________________________, ի դեմս Ընկերության տնօրեն _________________________________________

Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1Ընկերությունը մասնակցում է,,Հրազդանի Բժշկական կենտրոն,,ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից

կազմակերպված՝ ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ -17/004-Բ ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային ինքնաշխատ գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

________________________________________
ընկերության անվանումը

________________________________________
ընկերության հասցեն

________________________________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

________________________________________
ընկերության բանկային հաշվեհամարը

________________________________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

________________________________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
***լրացվում է մասնակցի կողմից*

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[24] N<br>*(պայմանագրի կատարման ապահովում)* | |
| 2. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ. | |
| 3. Ընկերություն (այսուհետ` վճարող)` | |
| 4. Վճարողի բանկը` | |
| 5. Վճարողի հաշվի համարը` | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ` | |
| 7. Վճարողի ՀԾՀ` | |
| 8. Շահառու` ,,Հրազդանի Բժշկական Կենտրոն,,ՓԲԸ | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ` 03017721 | |
| 10.Շահառուի բանկը` ԱԾԻԲ Հրազդան մ/ճ | |
| 11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/2479204573030010 | |
| 12.Գումարը թվերով և բառերով` | |
| 13.Արժույթը (բառերով և կոդով)` | |
| 14.Գործարքի /վճարման/ նպատակը` Պայմանագրի կատարման ապահովում | |
| 15.Պայմանագրի ծածկագիրը` ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/004-Բ | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը | 17. կից`---էջ |
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները`<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր> | Նշված դաշտի/ վավերապայման | Վավերապայմանի լրացման պահանջը | Վավերապայմանը լրացնող կողմը` |
|---|---|---|---|---|

[24] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | > փաստաթղթի վավերապայմանները | ի առկայությունը փաստաթղթում | | շահառուն կամ վճարողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | է շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | պայմանագրի ծածկագիրը (համարը) | պարտադիր | պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | լրացվում է վճարողի կողմից |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | լրացվում է շահառուի կողմից |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է | լրացվում է շահառուիկողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | տրամադրվեն վճարողին | |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդորում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է վճարողի կողմից |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր | |
| 20.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական | պարտադիր | պարտադիր<br>վճարողին սպասարկող ֆինանսական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | | կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |

**ԵՐԱՇԽԻՔ N** __________

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ______________________________
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար[25]) և ________________________ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

___________________ կնքված N _______________ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ______________________________(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____________ (______________) _________________________ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____________ (________________)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____________________________ բանկում բացված ___________________________
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _________________ մինչև _______________ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ________________________________________________________________
2) ________________________________________________________________
3) ________________________________________________________________:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը __________ (________________) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝

---

[25] *Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվի Յայաստանի Յանրապետության ֆինանսների նախարարությունը:*

**Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում` երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք` յուրաքանչյուր ուշացված օրվա համար` _______ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե`

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _______________________

_____________________________
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)